ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Կ-1233-29.12.2025-ԳԿ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված և 3-րդ հոդվածի 1-ին կետ	Առաջարկվում է նախագծի 2-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 9-րդ հոդվածի 3-րդ մասից հետո շարադրված մասերի համարակալումը ինչպես նաև Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի համարակալումը շտկել: Միաժամանակ առաջարկվում է չհամարակալված պարբերության բովանդակությունը շարադրել նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվող 49-րդ հոդվածի 1.1-ին մասում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենքի 49-րդ հոդվածում լրացվող նոր՝ 1.1-ին մասում «Օրենք» բառը շարադրել փոքրատառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետ և 4-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենքի 49-րդ հոդվածում լրացվող նոր՝ 7-րդ մասով, ինչպես նաև 4-րդ հոդվածով լրացվող 6-րդ մասով սահմանել, որ տեսալսողական ծրագրերի տեսագրությունները կամ ձայնագրությունները կարող են չներկայացվել, ոչ թե այն դեպքում, եթե առերեւույթ խախտման օրվանից անցել է 30 օր, այլ եթե **վարչական վարույթի հարուցման օրվա դրությամբ** առերևույթ իրավախախտման օրվանից անցել է 30 օր:	Ընդունվել է:	Ընդունվել է: